

Մ Ա Մ Ն Բ .

ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆԸ

20. ՄԵՐ ԱՆԱՊԱՏԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Ոչ Մովսէս կաթողիկոսի վաստակն ըստ արժանւոյն եւ ոչ ժամանակակից կեանքի պատկերն ամբողջութեամբ ներկայացուցած պիտի ըլլանք, եթէ վրիպեցնենք մեր տեսութենէն Մեծ Անապատն, որուն հիմնարկութիւնը դարուս նշանաւորագոյն երեւոյթը պէտք է նկատել: Մեծ Անապատն եղաւ, որ յառաջ բերաւ այն թմբութեամբ զգածուած դարուն կեանքի զարթնում եւ թարմութիւն, որուն բարերար ազդեցութեան մօտաւոր ապագան հանդիսացաւ վկայ: Մովսէս չէր Անապատին հիմնադիրը, բայց անիկա եղաւ Անապատին մտաւոր ուղղութեան ղեկավարը. անոր հեռատեսութեան արդիւնքն եղաւ, որ ի սկզբան զուտ տեսական կեանքի անձնատուր միայնակեացներէն կազմակերպուեցան յառաջ եկան հայ Եկեղեցւոյ համար հատընտիր առաջնորդներ եւ հայ մտքի լուսաւորութեան համար բարեկիրթ ուսուցիչներ: Տեսական ու գործնական հրահանգներով մարդուեցան միաբանները: Այն տեղ զբաւ Մով-